ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ԱԻՆ2195

ք.Երևան

2022-11-01

ՀՀ «Կադաստրի կոմիտե»-ն, այսուհետ՝ **«Բաժանորդ»** ի դեմս գլխավոր քարտուղար Միհեր Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և **«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ»** ՍՊԸ-ն, այսուհետ՝ **«Օպերատոր»**, ի դեմս գլխավոր տնօրեն Վահագն Ծատուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Օպերատոր**, մյուս կողմից, (միասին հիշատակվելու դեպքում, նաև՝ Կողմեր), հիմք ընդունելով իրենց փոխադարձ համաձայնությունը և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. **Նախարարություն** - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն:

1.2. **Օպերատոր** - **«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

1.3. **Հսկման Համալիր Համակարգ** այսուհետ՝ **ՀՀՀ** - ապարատա-ծրագրային միջոցների հավաքածու, բաղկացած **Հերթապահ-դիսպետչերական կենտրոն** համակարգից, այսուհետ՝ **ՀԴԿ**, Ներօբյեկտային հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ սարքից այսուհետ՝ **Ներօբյեկտային սարք**:

1.4. **Հերթապահ-դիսպետչերական կենտրոն՝ ՀԴԿ** - բաղկացած է վահանակային կայանից, ալեհավաքա-ֆիդերային սարքավորումներից, օպերատորի և ադմինիստրատորի աշխատանքային տեղի հավաքածուից:

1.5. **ՀԴԿ հեռախոսահամար - ՀԴԿ**-ին միացված հեռախոսահամար, որին փոխանցվում է ներօբյեկտային հրդեհի տագնապի ազդանշանի մասին հաղորդագրությունը:

1.6. **Ներօբյեկտային տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգ** այսուհետ՝ **Ներօբյեկտային համակարգ** - օբյեկտում գոյություն ունեցող տագնապի ազդարարման ինքաշխատ համակարգ:

1.7. **Ներօբյեկտային հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ սարք** այսուհետ՝ **Ներօբյեկտային սարք** - նոր տեղադրվող կամ օբյեկտում գոյություն ունեցող տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգին համակցվող սարք՝ նախատեսված օբյեկտում գոյություն ունեցող տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը ռադիոկապուղով, Internet/Eternet/GSM/GPRS/ հեռախոսային ֆիքսված ցանցերով կամ կապի այլ միջոցներով **Նախարարության ՀԴԿ** փոխանցման համար: **Ներօբյեկտային սարքը** մոնտաժվում է **Օբյեկտում** հրդեհի բռնկման վերաբերյալ առավել արագ ազդանշան ստանալու և համապատասխան մարմինների կողմից հրդեհաշիջում կատարելու նպատակով:

1.8. **Բաժանորդ** - սույն պայմանագրի կողմ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

1.9. **Օբյեկտ** - շինություն կամ ցանկացած օբյեկտ, որում տեղադրված է **Ներօբյեկտային համակարգ**, և որին համակցվելու է **Ներօբյեկտային սարքը**:

1.10. **Աշխատանքներ**- անհրաժեշտության դեպքում **Օպերատորի** կողմից **Ներօբյեկտային սարքի** մատակարարման, ինչպես նաև մոնտաժման, **Լոկալ ցանցին** միացման և գործարկման աշխատանքներ:

1.11. **Բաժանորդային վարձ** – **Օպերատորի** կողմից **Բաժանորդին** մատուցվող **Ծառայության**

դիմաց **Բաժանորդի** կողմից վճարվող ամսական վարձավճար:
1.12. Լոկալ ցանց - ռադիոկապուղի, Internet/Eternet/GSM/GPRS/ հեռախոսային ֆիքսված կամ կապի այլ ցանցեր, որոնցով տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը փոխանցվելու է **Նախարարության ՀԴԿ**:
1.13. **Հաշվետու ժամանակահատված** - օրացուցային ամիս:
1.14. **Մոնիթորինգ** - Օբյեկտում տեղադրված Ներօբյեկտային համակարգի տվիչների կողմից հրդեհի տագնապի ազդանշանների շուրջօրյա հսկում:
1.15. **Տեխնիկական սպասարկում** - ՀՀՀ-ի անխափան աշխատանքի ապահովում:
1.16. **Ծառայություն** - Օպերատորի կողմից ՀՀՀ-ի տեխնիկական սպասարկման և մոնիթորինգի ծառայությունների մատուցում:
1.17. **Տեխնիկական պայմաններ** – Օբյեկտում Ներօբյեկտային համակարգի առկայություն, որը պետք է համալրված լինի հետևյալ կապուղիներից որևէ մեկով՝ Contact ID, GSM, CSData, քաղաքային հեռախոսագիծ:
1.18. **Ընդհանուր պայմաններ** – Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման և Ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ, որոնք հրապարակված են www.sossystems.am կայք-էջում:
1.19. **Վճար**- Բաժանորդի կողմից Օպերատորին սույն պայմանագրի շրջանակներում կատարված Աշխատանքների և մոնտաժված Ներօբյեկտային սարքի համար նախատեսված վճար:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. **Սույն Պայմանագրով Օպերատորը պարտավորվում է Բաժանորդի Օբյեկտում (Օբյեկտի գտնվելու վայրի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Միկոյան 7, կարգը՝ պետական մարմին) առկա Ներօբյեկտային համակարգը համակցել ՀԴԿ-ին և գործարկել այն, ինչպես նաև Բաժանորդին մատուցել Ծառայություններ, որի դիմաց վերջինս Օպերատորին վճարում է Բաժանորդային վարձ՝** Պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:
2.2. Բաժանորդը երաշխավորում է, որ Ներօբյեկտային համակարգը համապատասխանում է Ընդհանուր պայմաններին: Օբյեկտի նշանակությունը կամ կարգը փոփոխվելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է միջոցներ ձեռնարկել Ներօբյեկտային համակարգը Օբյեկտի նոր նշանակությանը և կարգին համապատասխան Ներօբյեկտային համակարգը Ընդհանուր պայմաններին համապատասխանեցնելու նպատակով:
2.3. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցումը Բաժանորդի նախաձեռնությամբ կարող է կասեցվել առավելագույնը 12 (տասներկու) անընդմեջ ամիս ժամկետով:

3. ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԸ, ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Օպերատորի կողմից կատարված Աշխատանքների Վճարի չափը սահմանվում է սույն Պայմանագրի Հավելված 1-ով:
3.2. Բաժանորդը Օպերատորի կողմից Ծառայության մատուցման դիմաց վերջինիս վճարում է **Բաժանորդային վարձ՝ ամսական 5400 (հինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով՝ ներառյալ ԱԱՀ:**
3.3. Պայմանագրի 3.2. կետում նախատեսված Բաժանորդային վարձը Բաժանորդը Օպերատորին վճարում է յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա տասնհինգերորդ աշխատանքային օրը: Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո տաս օրվա ընթացքում Օպերատորը e-Invoicing ծրագրի միջոցով դուրս է գրվում հարկային հաշիվ/հաշիվ

վավերագիր: Հարկային հաշվի/հաշիվ վավերագրի դուրս գրման օրից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Բաժանորդը պարտավոր է ուսումնասիրել հաշիվը և առարկությունների առկայության դեպքում ներկայացնել դրանք գրավոր կարգով: Առարկություններ չներկայացնելու դեպքում տվյալ հարկային հաշիվը/հաշիվ վավերագիրը համարվում է Բաժանորդի կողմից ընդունված:

3.4. Պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված վճարումները Բաժանորդը պարտավորվում է փոխանցել Օպերատորի բանկային հաշվին:

3.5. Այն դեպքերում, երբ Բաժանորդը չի ստանում Ծառայություն իրենից կախված պատճառներով և այդ պատճառների կամ հանգամանքների մասին գրավոր չի տեղեկացնում Օպերատորին, ապա Բաժանորդը չի ազատվում ամսական Բաժանորդային վարձը վճարելու պարտավորությունից:

3.6. Այն դեպքերում, երբ Ծառայությունը չի մատուցվում Բաժանորդին Օպերատորի մեղքով, ապա Բաժանորդն ազատվում է Բաժանորդային վարձ վճարելու պարտավորությունից այն ամիսների համար, որոնց ընթացքում Ծառայությունը չի մատուցվել:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. **ԲԱԺԱՆՈՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝**

4.1.1. Ստուգել Օպերատորի կողմից Աշխատանքների կատարման ընթացքը՝ չխոչընդոտելով նրա գործունեությունը:

4.1.2. Պահանջել Ծառայության մատուցման ընթացքում Օպերատորի կողմից թույլ տրված թերությունների վերացում:

4.1.3. Մինչև աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Օպերատորին վճարելով մինչև Պայմանագրից հրաժարվելու վերաբերյալ ծանուցում ստանալու պահը կատարված Աշխատանքի համարժեք գինը և սարքավորումների արժեքը:

4.1.4. Լուծել Ծառայությունների մատուցման պայմանագիրը, Օպերատորին այդ մասին ծանուցելով ոչ ուշ, քան 60 (վաթսուն) օր առաջ:

4.2. **ԲԱԺԱՆՈՐԴԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝**

4.2.1. Պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում վճարել մատուցվող Ծառայությունների դիմաց սահմանված Բաժանորդային վարձը:

4.2.2.Պայմանագրով սահմանված կարգով ընդունել Օպերատորի կողմից կատարված Աշխատանքի արդյունքը:

4.2.3. Ապահովել Օպերատորի կողմից Օբյեկտ անարգել մուտքն ու ելքը:

4.2.4. Կատարել Օպերատորի կողմից Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման անհրաժեշտությամբ ծագած բոլոր բանավոր և գրավոր հրահանգները:

4.2.5. Օպերատորին տրամադրել.

- Օբյեկտի հատակագիծը, իսկ առկայության դեպքում նաև հատակագծի վրա Ներօբյեկտային համակարգի գծագրված տեղաբաշխման սխեման, Օբյեկտի մակերեսի, նշանակության և առանձնահատկությունների մասին տվյալներ,
- Հասցեային տվիչներ տեղադրված լինելու դեպքում, նշված տվիչների հասցեները,
- Ներօբյեկտային համակարգը ՀԴԿ-ին կամ Ներօբյեկտային սարքին համակցման համար անհրաժեշտ ելքերը (չոր կոնտակտ և այլն),
- Օբյեկտի հրշեջ ծորակների տեղաբաշխման, հրդեհաշիջման համակարգի և տարահանման սխեմաները,
- Առկայության դեպքում՝ Օբյեկտի բնութագիրը,
- Օբյեկտի հրդեհային անվտանգության պատասխանատու անձի կոնտակտային տվյալները,

• Համապատասխան տարածք՝ արտաքին ալեհավաքա-ֆիդերային սարքավորում տեղադրելու համար (անհրաժեշտության դեպքում):
4.2.6. Օպերատորին տրամադրել գործող Ներօբյեկտային համակարգ:
4.2.7. Ներօբյեկտային համակարգը և Ներօբյեկտային սարքը ապահովել անխափան սնուցման աղբյուրով:
4.2.8. Ապահովել Ներօբյեկտային համակարգի անխափան աշխատանքը, անսարքությունների դեպքում անհապաղ վերացնել դրանք:
4.2.9. Օպերատորի կողմից տրամադրված կապի միջոցներից (քարտեր և այլն) ոչ ՀԴԿ հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների կամ զանգերի դեպքում Օպերատորին փոխհատուցել այդ հաղորդագրությունների և զանգերի արժեքը;
4.2.10. Օպերատորի կողմից տրամադրված GSM կամ ռադիոկապի ծառայությունները տրամադրող օպերատորի կապի միջոցներին՝ քարտերին կարճ հաղորդագրություններ կամ զանգեր ստանալու դեպքում փոխհատուցել այդ հաղորդագրությունների և զանգերի արժեքը:
4.2.11. Ժամանակին վճարել ՀԴԿ-ի համակցման համար անհրաժեշտ ֆիքսած հեռախոսագծի և/կամ այլ կապուղու համար սահմանված վճարները, եթե համակցումը իրականացվել է նշված կապուղիների միջոցով:
4.2.12. Ներօբյեկտային սարքը չքանդել, չվնասել, չձևափոխել կամ որևէ այլ փոփոխության չենթարկել՝ առանց Օպերատորի գրավոր համաձայնության:
4.2.13. Կատարել Օպերատորի կողմից սահմանված Տեխնիկական և Ընդհանուր պայմանները:
4.2.14. Ապահովել Ներօբյեկտային համակարգի ՀԴԿ-ին համակցման տեխնիկական հնարավորությունը, հանաձայն Տեխնիկական և Ընդհանուր պայմանների:
4.3. **ՕՊԵՐԱՏՈՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝**
4.3.1. Պայմանագրով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում պահանջել մատուցվող Ծառայության դիմաց սահմանված Բաժանորդային վարձը:
4.3.2. Մուտք գործել Օբյեկտ՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունների իրականացման համար:
4.3.3. Չհամակցել Ներօբյեկտային համակարգը ՀԴԿ-ին, եթե Բաժանորդի կողմից չեն պահպանվել Պայմանագրի 2.2. կետով նախատեսված պահանջները:
4.4. **ՕՊԵՐԱՏՈՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝**
4.4.1. Աշխատանքները կատարել և Ծառայությունը մատուցել սույն Պայմանագրի դրույթներին համաձայն:
4.4.2. Բաժանորդի պահանջով վերացնել կատարված Աշխատանքների և մատուցվող Ծառայությունների թերությունները:
4.4.3. Իր կողմից մոնտաժված Ներօբյեկտային սարքի համար տրամադրել երաշխիք՝ երկու տարի ժամկետով: Հետերաշիքային սպասարկումն իրականացվում է վճարովի հիմունքներով՝ կախված կատարվող աշխատանքի ծավալից և ինքնարժեքից:
4.4.4. Աշխատանքների կատարումն իրականացնել ԲաժանորդՊայմանագիրը կնքելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
4.4.5. Ապահովել ՀՀՀ-ի անխափան աշխատանքը:
4.4.6. Պայմանագրով սահմանված Ծառայությունը մատուցել շուրջօրյա:
4.4.7. Անհրաժեշտության դեպքում ապահովել ՀԴԿ-ին համակցման համար GSM կամ ռադիոկապի ծառայությունները տրամադրող օպերատորի կապի միջոցներով (քարտ և այլն), եթե համակցումը իրականացվել է կապի վերը նշված տարատեսակներով:
4.4.8. Բաժանորդի ցանկության դեպքում՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ վերջինիս օգտագործման իրավունքովտրամադրել Ներօբյեկտային սարք:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄՆ ՈՒ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1. Պայմանագրի 2.1. կետում նշված Աշխատանքների ավարտից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում Կողմերը կնքում են Աշխատանքների հանձնման-ընդունման ակտ:
5.2. Աշխատանքների հանձնման-ընդունման ակտը կնքելու օրվան հաջորդող օրացուցային օրը Օպերատորն սկսում է Բաժանորդին մատուցել Ծառայություն:

6. ԺԱՄԿԵՏՆԵՐ

6.1. Ծառայությունների մատուցման սկիզբը հաշվարկվում է Պայմանագրի 5.2. կետով նախատեսված օրվանից:
6.2. Պայմանագիրը գործում է անժամկետ:
6.3. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել Պայմանագրից և պահանջել Պայմանագրի վաղակետ լուծում՝ այդ մասին նախապես 60 (վաթսուն) օր առաջ մյուս Կողմին ծանուցելու պայմանով:
6.4. Պայմանագիրը վաղակետ լուծելու դեպքում Օպերատորը Բաժանորդին է վերադարձնում չմատուցված Ծառայության համար վճարված գումարը, իսկ Բաժանորդը Օպերատորին վճարում է մինչ Պայմանագիրը դադարեցնելու պահը մատուցված Ծառայության համար նախատեսված Բաժանորդային վարձը, ինչպես նաև իրեն օգտագործման իրավունքով տրամադրված Ներօբյեկտային սարքը:

7. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքացիական հուզումները, գործադուլները, էլեկտրասնուցման խափանումները և հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:
7.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
8.2. Պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում վճարումները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բաժանորդը Օպերատորկետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0.5%-ի չափով:
8.3. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծառայությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար, եթե Բաժանորդը խախտել է Ընդհանուր պայմանները, Տեխնիկական պայմանները կամ որևէ այլ կերպ խոչընդոտել կամ անհնարին է դարձրել Օպերատորի կողմից Ծառայությունների մատուցումը, ինչպես նաև այն դեպքում, եթե Ներօբյեկտային հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման սարքը ինքնաշխատ չէ և

ազդանշանի փոխանցումն իրականացվում է Բաժանորդի պատասխանատու անձի միջամտությամբ:
8.4. Ներօբյեկտային համակարգի անսարք լինելու հետևանքով տագնապի կեղծ ազդանշան առաջանալու դեպքում, եթե այդ ազդանշանների թիվը մեկ ամսվա ընթացքում գերազանցել է երկուսը և Նախարարությունը դրանց արձագանքել է հրշեջ մեքենաների առաքմամբ, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին վճարել տուգանք՝ երկու կեղծ ազդանշանին հաջորդած յուրաքանչյուր կեղծ ազդանշանի համար՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամի չափով:
8.5. Օբյեկտի մակերեսի, նշանակության, առանձնահատկությունների մասին ոչ ճշգրիտ տեղեկություններ ներկայացնելու դեպքում այդ տեղեկությունների առաջացրած հետևանքները և ամբողջ ռիսկը կրում է Բաժանորդը:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
9.2. Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, Կողմերի համաձայնությամբ վեճը կարող է հանձնվել արբիտրաժային դատարանի քննությանը:
9.3. Պայմանագրի 9.2. կետում նախատեսված համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը հանձնվում է ՀՀ ընդհանուր իրավասության դատարանների քննությանը:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:
10.2. Պայմանագիրը շարադրված է հայերեն լեզվով, երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրիակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:
10.3. Պայմանագրում փոփոխություններն ու լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը կնքման պահից կցվում է Պայմանագրին և համարվում դրա անբաժանելի մասը:
10.4. Պայմանագրով նախատեսված բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային նամակով. հեռապատճենով կամ գրավոր նամակով՝ Պայմանագրում նշված հասցեներով:

11. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բաժանորդ	**Օպերատոր**
ՀՀ «Կադաստրի կոմիտե»	«Սօս Սիսթեմս» ՍՊԸ
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 7	Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ահարոնյան 2
Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Միկոյան 7	Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ահարոնյան 2
ՀՎՀՀ՝ 02534328	ՀՎՀՀ՝ 02605138
Հ/Հ՝ 900011030674	Հ/Հ՝ 1930041816500100
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գլխավոր քարտուղար՝	Գլխավոր տնօրեն՝
/ Մ. Խաչատրյան / _____	/ Վ. Ծատուրյան / _____

Հավելված 1
2022-11-01
Կնքված թիվ ԱԻՆ2195 Պայմանագրի

ք.Երևան

2022-11-01

Սարքավորումներ				
Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը,առանց ԱԱՀ	Ընդամենը
GSM-9N	հատ	1	55000	55000
Աշխատանքներ				
Համակցումը ՀԴԿ-ին	հատ	0	0.00	0

Ընդհանուր՝ 55000
ԱԱՀ %՝ 11000
Ընդհանուր վճարմանը ենթակա գումար՝ 66000 դրամ.

Օբյեկտի գտնվելու վայրի հասցեն՝
ՀՀ, ք. Երևան, Միկոյան 7

Կողմերի Ստորագրությունները

Բաժանորդ

ՀՀ «Կադաստրի կոմիտե»
Գլխավոր քարտուղար
/ Մ. Խաչատրյան / _____

Օպերատոր

«Սոս Սիսթեմս» ՍՊԸ
Գլխավոր տնօրեն
/ Վ. Ծատուրյան / _____